

Պ Ա Ղ Ե Ս Տ Ի Ն

(Տես էրես 294.)

Բ.

Սինա լեռը

Սինա լեռը կարմիր ծովուն վերջին երկու բազկաց վրայ ձևացած թերակող-
զւոյն երկայնութեամբը՝ ողնայարի ոս-
կեր նման բարձրացած լեռանց շրջ-
թայից գազաթնաւոր կէտն է։ Կարմիր
ծովուն հրաշալի անցքը, Եէհովա Աս-
տուծոյն իսրայէլի որդւոց վրայ ունե-
ցած պաշտպանութեանը փառաւոր վը-
կայութիւն մ'եղաւ. բայց Սինայի ցը-
ցեալ ժայռից մէջ պատահած դէպքերը
շատ աւելի գերազանց ու զարմանալի
եղան։ Հոն սկսաւ մարդկային ազգի
վերածնութեան ամենամեծ գործը. ա-
ռաջին անգամ հոն հրատարակուեցաւ
միոյն Աստուծոյ, տիեզերաց կառավար-
չին ու ստեղծողին էութիւնը. հոն յօ-
րինուեցաւ կրօնական ու քաղաքա-
կան աշխարհին առաջին օրինադիրը.
հոն տրուեցաւ բազմաստուածութեան
անտեղի վարդապետութեան առաջին
հարուածը. հոն սկսաւ երրայական
ժողովուրդը ազգ մը ձևանալ։ Մով-
սիսի օրէնսդրութեամբ համբաւաւոր
եղած լեռը զանազան գազաթներէ
ձևացած է, որոնք ամենքը ընդհանուր
անուամբ Քորեբ կ'ըսուէին, և այս պատ-
ճառաւ է որ թէ երկրորդման Օրինաց
և թէ Մաղաքիայի մարգարէութեան
մէջ, տեսարանը իբրեւ Քորեբ լեռան վը-
րայ հանդիսացած կը նկարագրուի։
Բուն Քորեբ ըսուածը բարձր գազաթ
մի է, ուսկից ծայր մը կը բարձրանայ
Սինա անուամբ. ասկէց զատուած ու-
րիշ ծայր մ'ալ կայ, որ ընդհանուր ա-
նուամբ լեւառն Սրբոռնոյն կատարի,
նեայ կ'ըսուի, որով որոշակի չի ճանչ-
ցուիր թէ ո՞րն է Ս. Գրոց Սինա լեռը։
Սուէզէն դէպ 'ի Սին անապատը յա-

ռաջելով, երկու ժամուան չափ լեռնե-
րուն մէջէն քաշելով, բոցակէզ աւա-
ղուտի մը մէջ սեպացեալ և դժնէատե-
սիլ երկիր մը ներս կը մտնայ, և ժայռից
զանգուածներն կը շրջափակեն ճանա-
պարհորդին տեսութեան հորիզոնը։ Եր-
կար ժամանակ քաշելէն ետքը, յան-
կարծակի նուիրական լեռան սքանչելի
ծայրերը աչքի կը զարնեն։ Սրբուհւոյն
կատարինէի ծայրին դէպ 'ի արևելեան
զառ 'ի վայրը համանուն վանք մի կայ,
անմատչելի բերդ մը. որուն հիւսիսային
կողմէն մինչև հովիտն իջնող ընդարձակ
պարտէզ մը, պանդխտին տաժանեալ
հայեցուածքն իւր կանաչազարդ ծառե-
րովն կը զուարթացունէ։ Այս պարտէ-
զը գլուխ գործոց մի է երկայնմտութե-
ն և աշխատանաց. վասն զի պէտք էր որ
բուսական հողը Եգիպտոսէն Նիլոսի ա-
փունքէն բերուի և խստաքարի (granit)
մերկ կողից վրայ տարածուի այնպիսի
բարձրութեամբ մը որ կարենան մեծա-
մեծ ծառերն արմատ ձգել. և ետքը
վերի ջրոց այնպիսի ուղղութիւն մի տալ,
որ գոգցես ողողելով՝ կարենան արեգա-
կան սպառիչ գործունէութեանը յաղ-
թել. և ետքը ամեն օր ամեն ժամ և
գրեթէ ամեն վայրկեան աշխատիլ, որ-
պէս զի այն հրային կլիմային և այն
երկնից երկաթեայ հրաշէկ կամարին
տակ՝ կարելի ըլլայ այն փափուկ տուն-
կերը պահել ու սնուցանել։

Քորեբ լեռան ելէջքը դիւրացընելու
համար, ուսկից Սինա լեռը կ'անցուի,
Սրբուհւոյն կատարինէի կրօնաւորը
ժամանակաւ մեծամեծ կանոնաւոր քա-
րերէ աստիճաններ շինած էին. բայց
հիմա ելէջից այս դիւրին միջոցը գրե-
թէ բոլորովին կործանած է, փոթորկի
օրեր հեղեղօրէն թափուած անձրևաց
ջուրերէն, և ժայռից մեծամեծ հատոր
ներէն, որ երբեմն երբեմն լեռան գազա-
թէն փրթելով վար կը գահալիժին։
Լեռան վրայ ելլելու ճամբուն մէջ յա-
ռաջելով, այն դիրքին վրայ՝ ուսկից Քո-
րեբէն Սինա կ'անցուի, կամարած և
դուռ մի կայ, և կամարը ձևացընող
քարերուն մէկուն վրայ խաչ մը, որուն

վրայ աւանդութեամբ դէպք մը կը պատ-
մուի: Հրեայ մը վանքէն մեկնելով Սի-
նայի գագաթը կ'ուզէ ելլալ, բայց խա-
չէ մը կ'արգիլուի, և ո՞ր կողմը որ կը
դառնայ, կը գոցուի անցքը իւր առջին-
այս հրաշքէն զարհուրած ծունկ կը չո-
քի, և իրեն ընկերող կրօնաւորին կ'ա-
ղաչէ որ զինքը մկրտէ:

Քիչ մ'ալ յառաջելով, Եղիա մար-
գարէին քառասուն օր բնակած ժայ-
ռին վրայ մատուռ մը կը տեսնուի, որ
յունական եկեղեցեաց ձևն ունի, մէջ
տեղը խորանով մը: Քիչ մը հեռու փա-
ռաւոր նոճի մը կը բարձրանայ, որ իւր
տեսակին մէջ ինքն է միայն որ դիմա-
ցած ըլլայ այն բոցակէզ կլիմային: Այս
կէտէն միայն կ'որոշուի Սինայի գագա-
թը, ինչպէս նաև զինքը պատկած և պա-
տող մատուռը ու մզկիթը:

Դէպ 'ի վեր ելնելը շարունակելով,
որ միշտ աւելի կը դժուարանայ, կը
հանդիպի այն ժայռը ուր Մովսէս Ռա-
փիդիմի դաշտավայրը աչքին առջին,
ձեռքերը երկինք վերուցած կը խնդրէր
Աստուծոյ իւր ժողովրդեան Ամաղեկայ
վրայ յաղթութիւնը: Վերջապէս յետ
երկար տաժանելի աշխատութե՜, նուի-
րական լերան գագաթը կը հասնի ճանա-
պարհորդը, ուր վարձատրուած կը գըտ-
նայ իր աշխատութիւնը սքանչելի շրը-
ջապատկերով մը (panorama), որ սուրբ
գրոց մեծամեծ մնացորդներով լի է,
որոնք յետ երեք հազար տարւոյ կը
պահեն տակաւին իրենց վսեմութիւնը
և մեծութիւնը:

Թերակողմոյն ծայրը դէպ 'ի հարա-
ւակողմը տարածուելով, կ'երթայ կը
կորսուի ծովուն մէջ. որուն մակերևու-
թին վրայ կը տեսնուին մառախլոյ պէս
սպիտակ և տոգոյն ծովահինից կղզիներ
ը. աջակողմը Ափրիկոյ լեռները. ձա-
խակողմը Անապատ Արաբիոյ անսահ-
ման դաշտերը. վարի կողմը Ռափիդիմի
հոգակաւոր դաշտը. և չորս կողմը լե-
րանց բազմութիւն մը որ հեռուէն ան-
շարժ ալիքներով խստաբարէ ծովու մը
նմանութիւն ունին:

Լերան գագաթը շինուած մատուռը

ու մզկիթը կործանելու մօտ են. բայց
պատերուն վրայէն կախուած բաղմա-
թիւ ուխտանուէր պատկերները (ex-
voto), կը ցուցնեն որ երկու կրօնից
պանդուխտներն ալ զանոնք մոռցած
չեն, և կու գան հոն երկրպագութիւն
ընելու, ոմանք Աստուծոյ Որդւոյն և այլք
Աստուծոյ մարգարէին: Մատրան շի-
նութիւնը Հեղինէ դշտոյին կ'ընծայուի.
բայց ճարտարապետութեան կերպը ա-
ւելի նոր ժամանակ մը կը նշանակէ:

Սինա լեռը Սրբուհւոյն Կատարինեայ
լեռնէն բաժնող հովտին մէջ կը տես-
նուի այն ժայռը՝ ուսկից Մովսէս կեն-
դանի ջուր բխեցուց որ երկոտասան ոտք
բարձրութեամբ խստաբարէ զանգուած
մի է: Վրայէ վրայ հորիզոնական ձևով
բացուած հինգ ծակերը, կը նշանակեն
այն հինգ հրաշալի բերանները՝ որոցմով
խօսեցաւ Աստուած իր ժողովրդեանը:
Քիչ հեռաւորութե՞ նոյնպէս ուրիշ մա-
տուռ ու պարտէզ մը կայ, որոնք նմա-
նապէս Սրբուհւոյն Կատարինեայ կրօ-
նաւորաց արդիւնքն է:

Համանուն վանքը միջին դարու ա-
մուր պղտի քաղքի մը նմանութիւն ունի,
թէ՛ զինքը շուրջանակի պատող բարձր
ու զօրաւոր պարսպաց և թէ՛ կրօնաւո-
րաց ըրած զգուշութեանցը նկատմամբ,
որ ոչ զոք անձանօթ կը թողուն մերձե-
նալու: Տեղւոյն միայնութիւնը ու շրը-
ջակայ անապատից մէջ թափառող Պե-
տէվիներուն յափշտակութիւնը ու յան-
դըգնութիւնը, անհրաժեշտ կերպիւ ստի-
պեցին կրօնաւորները որ և իցէ կարելի
յարձակմանէ ապահովել զվանքը. ա-
նոր համար ինչուան դիւրաւ ներս մըտ-
նելու կարելիութիւնն իսկ խափանելու
համար, մտածեցին որ դուրսի պատին
վրայ ամենեկին դուռ չթողուն. այս պատ-
ճառաւ ամեն ներս մտնողն ու ելողն
չուանով մը կ'ելլայ ու կ'իջնայ, ինչուան
պատուհան մը բարձրանալով, որ դրան
տեղ կը ծառայէ:

Կը շարունակուի: